



ՃԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

55ԴՏ ՏԱՐԻ.ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻԻ 20

7 ԱՊՐԻԼ 1907

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շամսաննեան Խան Ողջ

Ժան Մոռէաս (Ուսումնասիրութիւն)

Տիկին Զապէլ Եսայեան

Դիմակին Տակ

Խաչատուր Միսաիւեանի մէկ նամակը

Տօք. Խորասաննեանին

«Մասիս»-ի Մատենադարանը

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԱՐՏԱԶԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՏՕՄԻՆՑ

ՄԻՀՐԱՆ ՈՒՂՈՒՐԼԵԱՆ

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱԳԱՆԱՆ

1907

ԱՐՆԻՆԷԼՔ

Օրաթերթ ազգային, գրական և քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան՝ Կ. Պոլսոյ համար 80 դրշ. գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐՆԻՆԷԼՔ հրապարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խնամեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններովը:

Հիւ ՕՐԵՐ. — ՊՈՒԷՏ ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆ ԵՒ ԻՐԵՆ ԺԱՄԱՆԱԿԻՑ ԻՄԱՅԱԿԱՆԻՆ ՎՐԱՅ ՀԱՅԵԱՅՔՆԵՐ. — Յ. Գ. Մ. — Այս կենսագրական բանասիրական գործը, հրատարակուած է Սագաեան տպարանէն՝ 140ի չափ էջերով, գրականութեան վրայ կարեւոր տեսութիւններով: Կը գտնուի բոլոր գրալստեաններուն քով. գին 7½ դրշ.:

ԼՈՅՍԻ ԵՐԵՍ ԿԸ ՏԵՍՆԷ

Մէկը՝ որ երկար ատեն տառապելէ ետքը ակուայի ցաւով՝ զայն քաշել կուտայ ճարտար ատամնաբոյժի մը, կամ արհեստական նուրբ միջոցներով լեցնել կուտայ ակում, կամ գոռօնի մէջ առնել կուտայ, ա'լ անգամ մըն ալ երեսը չտեսնելով ցաւին: Խնդիր է սակայն միշտ՝ լա'ւ, ճարտար ու արուեստին գաղանիքներուն գիտակ տառամաբոյժ մը գտնել: Այս նպատակին համար առանց վարանելու և դո՛ւ մնայու մեծ ապահովութեամբ պէտք է ղիմել հանրածանօթ ատամնաբոյժ Խաչիկ էֆ. Ժամկոչեանի, որուն համբաւը և կարողութիւնը վաւերացուած է ամէնէն: Դիմել Պահէ-Գարու:

ՀԱՒԱՔԱԾՈՅԻ ՆԱՄԱԿԱԴՐՈՇՄՆԵՐՈՒ ՍԻՐԱՀԱՐՆԵՐՈՒՆ. — Եթէ վաճառել ուղուած հաւաքածոյի նամակադրոշմներ ունիք, գիմեցէք Կ. Պոլիս, Ղալաթիա, Աւստրիական նամակատունին ետեւի կողմը եւ Դօմիոնի Խանի կից՝ Տէմիր-խան, թիւ 25 հաւաքածոյի նամակադրոշմի վաճառական՝ Մարտիրոս էֆ. Արայճեանի, որ գոհացուցիչ գիններով կը գնէ: Եթէ նամակադրոշմի հաւաքիչ էք և կը փափաքիք ձեր հաւաքածոն ճոխացնել՝ դիմեցէք դարձեալ Մարտիրոս էֆ. Արայճեանի, որ ղիւրամատչելի գիններով կը վաճառէ՝ ամէն տեսակ հաւաքածոյի նամակադրոշմներ: Այս գործողութիւնները կը կատարէ թղթակցութեամբ ալ: Պէտք եղած ատեն Կ. Պոլսոյ յաճախորդներուն կ'այցելէ՝ նամակադրոշմներու գնման և վաճառման համար, եթէ կանխաւ յաճախորդներ իրենց հասցէն և փափաքը յայտնեն՝ 10 փարանոց քարթ-բօսդալով մը: Առանց որ և է փոխարինութեան նամակադրոշմներու գնահատում: Հասցէ՝ Մարտիրոս Արայճեան, Ղալաթիա, Տէմիր-խան թիւ 25 Կ. Պոլիս: Դիտ. — Նամակ գրողներէն կը խնդրէ իրենց հասցէն յստակօրէն գրել:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին Քարտուղարութեան կողմէ հետեւեալ պաշտօնական նամակը ուղղուած է թերթերուն. — Տէր Խմբագրապետ. — Իերկայ եօթնեակիս մէջ ստացուած Պոլսի թերթերուն մէջ Ն. Ս. Օծութեան փետր. 20 ամսաթիւով Պատրիարքարան ղրկած պաշտօնագրին առաջարկութեանց մասը խեղաթիւրուած տեսնուելով՝ հրամայուած է մեզ ուղղել: 1. Կիլիկիոյ կաթողիկոսները պէտք է յիշեն պատարագի մէջ Ընդհ. Կաթողիկոսի անունը: Եթէ նոյնը պահանջուի վիճակային բոլոր եկեղեցականներէն, փոխադարձ պէտք է Պատրիարքարանի Վիճակներու մէջ Կիլիկիոյ Կաթողիկոսներուն անունը յիշատակել՝ էջմիածնի Կաթողիկոսին ետքը: 2. Կիլիկիոյ Կաթողիկոսները կրօնական տեսակէտով անկախ են Պոլսոյ Պատրիարքարանին, իսկ հաւատքի վերաբերեալ ծանրակշիռ խնդիրներու առթիւ խորհրդակցութեան կը մտնեն, կամ կարծիքներու փոխանակութիւն մը կը կատարեն Մայր-Աթոռի Կաթողիկոսին հետ: 3. Եթէ Կիլիկիա ձեռնադրուած եպիսկոպոսներ, վիճակաւոր կամ սոսկ վանական, իրաւունք ունենան էջմիածնի Վիճակներուն մէջ պաշտօնավարելու և հոգեւոր բարձրագոյն պաշտօններու համար ընտրելի ըլլալու, առանց Կեղր. Վարչութեան հաւանութեան կամ ընծայագրին՝ չպիտի կրնան ձեռնադրուիլ: 4. Կիլիկիոյ Կաթողիկոսներու տրուած Ամենապատիւ տիտղոսը չատ անխմատ է, քանի որ կրօնական բարձր հեղինակութեան գաղափարը չամիտիւր. Ամենապատիւ Պատրիարքներէն նշանակելի իրաւասութիւն և իշխանութիւն ունին Կաթողիկոսները, քանի որ եպիսկոպոս ձեռնադրելու և Ս. Միւռոն օրհնելու իշխանութենէն զուրկ են Պատրիարքներ: 5. Կիլիկիոյ Կաթողիկոսները Օսմ. Կայս. Կառավարութեան հետ իրենց յարաբերութիւնը ըստ սովորութեան Պատրիարքարանի միջոցաւ կը կատարեն: Ուղղակի դիմումներ ալ կրնան ընել: 6. Կիլիկեան Վիճակներու Առաջնորդներու հաստատութիւնը ուղղակի Կաթողիկոսներու իրաւունքն է. վերահաստատութիւն Վարչութեան կողմէն բացարձակապէս զլացում մըն է այդ իրաւունքներուն: 7. Առաջնորդներու Պէրաթները Պատրիարքարանի միջոցաւ կը խնդրուին և Կաթողիկոսներու կոնդակով կը յանձնուին Առաջնորդներու: 8. Կիլիկեան Վիճակներէն Պատրիարքարանի պահանջած մուգնքան Կաթողիկոսարանի միջոցաւ կը հատուցուի կիսով չափ և մնացեալ կէսը Կաթողիկոսարանի յարաբերական զիւաններուն կը յատկացուի:

Քարտուղարութիւն

1907 մարտ 26 ի Մայրաթիւնս Սոսոյ

Բարիգի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցիին մէջ վայելուչ հանդիսաւորութեամբ կատարուեր է յուղարկաւորութիւնը Պ. Անդրանիկ Իօաննէսքուի, որ, ինչպէս կը յիշուի, կարեւոր գումար մը կտակած էր Ազգ. Պատրիարքարանին՝ կրթական ու բարեգործական հաստատութիւններու յատկանալի: Հանգուցեալին մարմինը ամփոփուեր է Բէռլաչէզ գերեզմանատունը: Հանգուցեալին քրոջ և քրոջ աղջկան (այրի Տիկին Լեւոն Լէֆիէճեան) և զաւակներուն փաստարան Յակոբ Պահրի էֆ.

ԽԻՆԻՍ

ԶԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԵՆՈՎՐԵ ԱՐՄԷՆ

55ՐԴ ՏԱՐԻ. ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԹԻՒ 20

7 ԱՊՐԻԼ 1907

ՇԱՄՏԱՆՃԵԱՆ ԽԱՆ ՈՂՋ

Հանրային միահամուռ սրտադին սգակցութեան այն ցոյցերը՝ որոնց մէջ վերցաւ դադաղը Շամտանճեան Խանի, անգամ մին ալ հաստատեցին թէ՛ իր մահով ինչ դառն կորուստի մը հարուածը կը կրէր Համայնքը, և ո՛ր աստիճան պանծալի դէմքի մը անհետացումը ողբալու ցաւին դէմ կը գտնուէր։ Այդ հարուածը իր անակնկալ ճակատագրականութեանը չափ ցնցող էր և անոր ազդած սարսուռը կը քանդակուէր հոգիներու մէջ՝ անջնջելի կակիծի մը յաւերժական խորութեամբ։ Մեռաւ ան, թաղուեցաւ, հանգչելով յաւիտենական անէութեան ծոցը, և ամէն մարդ անոր սուգը ունի այսօր։ Այդ սուգին խորութեան ու ընդհանրականութեան իր արժանաւորութեան իսկ համար, անոր կորուստին ցաւը կը շեշտուի բարձր աստիճանով մը և իր անհետացումը կ'ողբացուի անհաւասարելի դառնութեամբ մը և համեմատութեամբ մը՝ զոր կարելի չէ յատկացնել ո՛ր և է ուրիշի։

Բայց Շամտանճեան Խան այսօր ողջ պիտի ըլլար, և թէ ան կսկծալի զոհն է բժշկական անզգուշութեան մը։

Թէ ինչպէս։

Կանխենք ըսելու թէ՛ բժիշկ չենք մասնագիտութեամբ։ Բայց բացօրոյ և յայտնագիման ճշմարտութիւններ, — որոնց համոզ-

ուելու համար բժիշկ ըլլալու պէտք չկայ, — այդ եղանակացու-
թեան կը յանդեցնեն մեղ, պարզ, յստակ և անհերքելի *donnée-*
ներու համաձայն, որոնք խնդիր չեն վերցնելու և զորս պիտի
բացատրենք :

Զանոնք մէջտեղ դնելով, «յետ մահու» դատաւարութիւն
մը փորձել չկրնար ըլլալ մեր նպատակը, ո՛չ ալ վերակոչել
անդարձ հոգին հանգուցեալին, որ իր յաւիտենական հանգիս-
տին մէջ է մտած, այլ մեր վաւաքն է լուսաբանութեան մը
հրաւիրել միտքերը, և ճշդել նորարծարծ համոզումի մը ստու-
գութիւնը, խնդիրը պարզելէ և իր ներքին իսկական գոյներովը
մերկացնելէ ետքը՝ թողլով որ հարցին ձեռնհասներ՝ իրենց վճիռը
տան՝ անոր մասին :

Արդ. —

Տօքթ. Պենոն Պէղաղեան Բիզանդիոնի մէջ յաջորդական
երկու յօդուածներով բժշկականօրէն կը հաստատէ թէ՛ անակն-
կալ մահերէ մեծ մասը առաջ կուգան պինդերակութենէ, այ-
սինքն երակներէն մէկուն յանկարծական խզումէն: Ծանուցուեցաւ
թէ Ծամտանճեան Խան մեռաւ մայր շնչերակին (*aorte*) խզումէն :
Ուրիշ երկու ծանօթ բժիշկներ ալ՝ որոնց կարծիքը հարցուցինք
Ծամտանճեան Խանի հիւանդութեան մասին, կը հաստատեն թէ
Angine de Poitrine ունէր ան: Մէկը կամ միւսը, Ծամտանճեան Խանի
մահը հուշակող երակի խզումի պարագան ստոյգ ու անվիճելի է,
որովհետեւ երակի խզումը՝ ուղղակի մէկ հետեւանքն է նաև *Angine*
*de Poitrine*ի գոյութեան: Պինդերակութեան մը խնդիրը՝ ուրեմն՝
Խանին վրա՝ անհերքելի է: Տեսնենք թէ ի՞նչ է պինդերակու-
թիւնը :

Անակնկալ մահերու ակտային վիճակներուն ամէնէն զխառորդ
պինդերակութիւնն (*arterio-sclérose*) է: Առթեռիօսֆիէոզ. ահա
շնչերակներու ակտային վիճակ մը՝ որուն գոյութիւնը բժիշկ չկայ
որ օրուան մէջ մէկ քանի տարեցներու վրայ չհաստատէ, վասն զի
այսօր 35 տարեկանէն վեր շատ մարդ քիչ կամ շատ պինդերակու-
թեան ենթարկուած է: Բացատրենք թէ ի՞նչ է պինդերակութիւնը:
Տարիներու ընթացքին մէջ, շնչերակներու ներսիքին, արիւնի կրա-
յին աղերէն կազմուած մրուրի թանձրկեղ խաւեր կը բարդուին կա-
մաց կամաց, կրային խաւերուն այս գոյացումէն շնչերակները կը
կարծրանան, իրենց առաձգականութեան ձկունութիւնը կը կոր-
սնցնեն, և կուգայ ատեն մը որ՝ կարծր, պինդ խողովակներու կը
վերածուին: Շնչերակներու ներսի կողմը գոյացող այդ մրուրը հե-
տզհետէ անոնց անցքը կը նեղցնէ և շնչերակային անձկութիւն մը
առաջ կը բերէ: Այս պատճառով այդ նեղցած շնչերակներուն մէջէն
արիւնը չկրնալով դիւրաւ ու կանոնաւորութեամբ իր շրջանը կա-
սարել, սիրտը կը հարկադրուի աւելի զօրաւոր կերպով առաջ

մղելու արիւնը, այս վերջինը սիրտէն ատացած անսովոր ուժգնութեան բերումով, իր կարգին, կարելի կ'ընէ այդ անձուկ խողովակներուն մէջէն անցնելու և մարմինին մէջ հնար եղածին չափ բաշխուելու համար: Բայց արիւնին սիրտէն առած մղումները տարապայման կերպով ճնշելով, առաձգականութենէ զուրկ, ընդլայնելու անկարող այդ կարծրացած շնչերակներուն վրայ, ճիղի մը և կամ ուրիշ պատճառներու հետեւանքով, ասոնք յանկարծակի կը խզուին, կը պայթին, և քիչ կամ չատ ներքին արիւնահոսումներ առաջ բերելով, պատճառ կ'ըլլան յանկարծական մահերու:

Վճռապէս կը հաստատէ այս տեսութիւնը թէ՛ Շամտանճեան Խան պինդերակութիւն ունէ՛ր, և թէ պինդերակութեան հետեւանք երակի խզում՝ մըն էր որ պատճառ եղաւ իր յանկարծական մահուան: Տօքթ. Պէղաղեան կը նկարագրէ ու կը հաստատէ թէ՛ պինդերակութիւնը արմատապէս բուժելի է, վերջերս յայտնուած գիւտի մը միջոցով: Թէ ինչպէս.

Մինչև անցեալ ամառ բժշկութիւնը իր ունեցած միջոցներով պինդերակութեան գոյութիւնը միայն կրնար երեւան բերել. բժիշկ մը «պինդերակութիւն ունիս» կրնար ըսել, միայն այսչափ: Այսօր, շնորհիւ Տօքթ. Վէլուտնի, բժշկութիւնը շնչերակի զարկաչափ (sphygmomètre) գործիք մը ունենալուն համար կը պարծի, որովհետեւ պինդերակութեան ակտաճանաչումը անով մի անգամ քիչ միշտ ամուր հիմքու վրայ հաստատուած է: Ուրեմն ամէն անգամ որ բազկերակի մը վրայ զարկաչափը ճնշումի 15⁰ նշանակէ, վախ չկայ, պինդերակութենէ զերծ է ննթական: Սակայն երբ 18, 20, 22, 24 ու աւելի բարձր աստիճաններ ցոյց տայ, ատիկա կ'ապացուցանէ որ պինդերակութիւնը քիչ կամ չատ բոյն դրած է շնչերակներու կազմին մէջ: Անգամ մը որ պինդերակութիւնը երեւան եկած է, ինչ ընելու է:

Այսօր ֆրանսացի մեծանուն ախտաբան Տօքթ. Մութիէի ջանքով, «հրաշիւք իմն» ըսելու չափ կարճ ժամանակամիջոցի մը մէջ, հանճարարուեստ ելեկտրական դարմանումով մը, 28, 26⁰ շնչերակային ճնշում ցոյց տուող պինդերակաւորներ բուժուած են: Ահա թէ ինչպէս: Քսան տարի առաջ, Բրօֆ. տ'Առսոնվալ, հաստատեց թէ մէկ երկվայրկեանի մէջ 3—4 հազար անգամ շրջան ընող ելեկտրական հոսանքները երբ մարմնին մէջէն անցնին, մահ առաջ կը բերեն: Ու օր մըն ալ անյադ հետաքրքրութենէ մղուած ուղեց զխոնալ թէ՛ ինչ պիտի պատահի երբ ելեկտրական հոսանքները մէկ երկվայրկեանի մէջ 3—4 հազարի տեղ, 100,000, 500,000 անգամ շրջան ընեն: Բայց այս անգամ ինքզինքը զարմանալի իրողութեան մը առջեւ գտաւ. առաջ եկած արդիւնքը առջինին բոլորովին ներհակն էր. այդ 100,000—500,000 շրջանի արագութիւն ունեցող հոսանքները փոխանակ մահաբեր ըլլալու, տեսնուեցաւ որ ոչ միայն անվնաս են, այլ թաքուն բուժիչ յատկութիւններ ունին: Այս խիստ կարեւոր փորձը նախապէս կենդանիներու վրայ կատարուեցաւ: Կենդանիներէն հնդիկ խողին վրայ փորձերը առաջ տարուելով, զիտուեցաւ որ այդ հոսանքները շնչերակներուն մէջ, պինդերակու-

թեան հետեւանքով մթերուած կրային աղերը հալեցնելու և չնչե-
րակային տարապայման ձգտումը զգալապէս նուազեցնելու կը ծա-
ռայեն : Տարիներ անցան , և հակառակ մէկ քանի բժիշկներու ըրած
լուրջ ջանքերուն , ԽՍՀՄ-ում մէթոքը գործնական թշկուծեան
մէջ մուտք չգործեց : Ու չպիտի ալ գործէր՝ եթէ Տօքթ. Մուդիէ
ԽՍՀՄ-ում վերոյիշեալ փորձերը ուսումնասիրելու հանձարեղ դա-
շտաբարձ չլընային : Մուդիէ նախ ջանաց ԽՍՀՄ-ում մէթոքը
խրաչնել . յետոյ այդ մէթոքով ծայր աստիճան ճեպընթաց հոսանք-
ներուն չնչերակային գերաճուման , այսինքն պինդերակութեան
վրայ ունեցած իրական ազդեցութիւնը գործնական ու բացորոշ
ապացոյցներով երեւան բերաւ :

Թէ ի՞նչպէս : Տօքթ. Մուդիէ նախ իրեն զիմողին պինդերակա-
ւոր ըլլալը կամ չըլլալը հասկնալու համար , զայն զարկաչափին
հակակշռին կ'ենթարկէ : Ըսենք թէ այդ անձին՝ բազկերակը 20⁰
ճնշում մը ցոյց տուաւ : Ենթական կը մտնէ ԽՍՀՄ-ում մետաղ-
եայ վանդակին մէջ , որուն ճիւղ մէջտեղը կը գտնուի պատեանով
մը կղզիացած ելեկտրական պարուրածեւ թել մը : Այդ կամարածեւ
վանդակին մէջ հիւանդը նստեցնելէ վերջը , ծայր աստիճան արագ
և ուժգին , այդ հոսանքներուն շրջանները անցընել կուտայ անոր
մարմնին մէջէն : 8—10 վայրկեան վերջը ամէն բան լմնցած է :
Ահաւի արագութեամբ , հարիւր հազարաւոր հոսանքներ , մարմնին
մէջ ծայրէն միւսը , ամբողջ հիւսուածքներուն , գործարաններուն
մէջ իրենց անցուղարձը կատարած են անանկ ուժգնութեամբ մը ,
արտորանքով մը՝ որ ենթակային ձեռքին մէջ եթէ ելեկտրական
լապտեր մը գտնուի , իսկոյն իր մարմնէն կը վառի : Եւ մինչ այս
ամէնքը տեղի ունեցած են , միեւնոյն անոն չնչերակները մաք-
րուած , կրային աղերը անհետացած են և պինդերակութիւնն ալ
դարմանուած է : Մեծանուն ելեկտրաբույժը մէկ դարմանումով 60ի
նուազում մը , բարւոքում մը ձեռք բերելէն վերջը , կատարեալ
բուժումը , այսինքն գերաճեալ չնչերակներու ճնշումը իրենց
ամէնէն բնական աստիճանին , 15⁰ին իջեցնելը իրեն համար միայն
մէկ կամ երկու այցելութեան գործ էր ու այնպէս ալ եղած է :
Ուրեմն երկու կամ երեք անգամ այդ հրաշագործ վանդակին մէջը
մտնելէն վերջը , ալ չիք պինդերակութիւն և իր հետեւորդները :
— Աճպարարութիւն չէ աս , ելեկտրաբուժութեան մէկ նորագիւտ ու
փառաւոր յաղթանակն է , որուն շնորհիւ Եւրոպայի մէջ 22 , 24 ,
26⁰ի հարիւրաւոր անձեր 8—10 ամիսներէ ի վեր՝ չնչերակներու
տեսակէտով առողջ առողջութիւն մը , երկտասարդութիւն մը կը
վայելեն :

Տօքթ. Պէղապեան կը յայտնէ նաև թէ՝ Մուդիէի գործերը
կը գտնուի Պոլիս , Բերաի Ֆրանսական Հիւանդանոցը :

Արդ , հաստատուելէ ետքը թէ՛ Շամառանճեան Խանը զգետ-
նող հիւանդութիւնը եղած է երակի խցում , — հետեւանք պինդե-
րակութեան , — և տեղեկանալէ ետքը թէ պինդերակութիւնը ար-
մատապէս բուժելի է և զայն դարմանող գործիքն ալ կը գտնուի
Բերաի Ֆրանսական Հիւանդանոցը , բնական չէ՞ հարցնել թէ՛

ի՞նչպէս խանր դարմանող բժիշկը՝ Տօբթ. Սիմոնօֆ՝ զգացած ու հաստատած չլլար իր մեծանուն հիւանդին վրայ այդ ախտաճանաչութիւնը՝ տարիներով անոր բժիշկը ըլլալով և ճանչցած խառնուածքը։ Եթէ հաստատած էր, ի՞նչպէս կ'ըլլայ որ զայն բուժելու ուղղակի միջոցին չէ դիմած, նոյն իսկ փորձ մը չէ ըրած։ Փրանսական հիւանդանոցը հեռու տեղ մը չէ, ոչ ալ իր հիւանդը բուժումի վարձքը վճարելու անկարող մէկն էր։ Եթէ նոյն իսկ Մուդիէի գործիքը Պոլիս գտնուած չլլար, դժուար էր խանին համար կամ դրամէ՞ պիտի նեղուէր Եւրոպա երթալու՝ ենթարկուելու համար Մուդիէի դրութեամբ ելեկտրաբուժութեան։ Եթէ Տօբթ. Սիմոնօֆ անտեղեակ էր այս տեսակ գիւտի մը գոյութեան, աւելի՛ մեծ յանցանք։ Եթէ տեղեակ էր՝ ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ի՞նչ արդարացումով իր հիւանդը չէ ենթարկած ելեկտրաբուժութեան, արմատապէս բուժելու համար զայն։


Ահաւասիկ իրողութիւններ՝ որոնք յստակօրէն ցոյց կուտան թէ՛ բժշկական անդգուշութիւն մըն է՝ որ դեր խաղացած է՝ առաջ բերելու մահը Շամտանճեան խանի։ Վերելի յայտնութիւններէն տարակոյս չմնար թէ՛ խանը զոհ մըն է սխալի մը, որուն համար մեծապէս պատասխանատու կը մնայ անոր հեղինակը, որովհետեւ այդ սխալին չզոհուիր ո՛ր և է անպէտ կեանք մը, — այդ պարագան իսկ արդարացում մը չէ արդէն, — այլ այդ սխալին հետեւանքով կ'անհետանայ Համայնքէն յաւէտ պանծալի դէմք մը, օգտակար ու սիրելի իր կեանքով՝ իբր Մարդ ու իբր Հոգի։ Համաձայն այս երեւոյթներուն, Շամտանճեան խան կրնար այսօր ողջ ըլլալ, և պիտի ըլլար, եթէ ո՛ր և է մասնակի պատճառներ ու պարագաներ չեն հերքեր այս տեսութիւնը։ Բժշկական անգիտակցութեան մը զոհուիլը մեծապէս թանկագին դէմքի մը՝ ո՛ր աստիճան պատասխանատու կը թողու իր բժիշկը՝ կը ձգենք վճռել հանրութեան։

Մենք, երեւոյթներուն համաձայն՝ գործուած սխալին զոհուող թանկագին կեանքը ողբալով անգամ մըն ալ, — ու այս անգամ կրկնապէս, — կ'ուզենք լոկ արձագանգ ըլլալ շա՛տ բացօթյա ճշմարտութեան մը, թողլով և հրաւիրելով որ մասնագիտօրէն ձեռնհաս բժիշկներ արտասանեն վերջին վճիռը, լուսաբանելով հանրութիւնը, որ այսպէսով դատախաղ կը կանգնի իր մէջէն կորսնցուցած պատկառելի անդամին և յաւէտ փառաւորելի դէմքին կեանքին համար։

Այլապէս, անոր ոգին հանգիստ չալիտի թողու հանրային խիղճը։

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՖՈՒԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԵՄՔԵՐ



ԺԱՆ ՄՈՌԷԱՍ

ժան Մոռէաս՝ Զեռանսայի աշտօրուան նոր բանաստեղծութեան ամէնէն փայլուն ներկայացուցիչներէն մէկը՝ Աթենացի Յոյն մըն է :

Պաճանասայի ժամանակակից բանաստեղծներու մրգաստանին մէջ, օտաւրամոյծ, տարաշխարհիկ պատուհասներն ու չաչերը հազուագիւտ չեն : Հիներէն իսկ, Անտուէ Շէնիէ Պոլսեցի է, Յոյն անդաստանի պտուղ : Լըքոնթ տը Լիլ, Ժօզէ-Մառլա տը Հէռէտիա, զուտ ֆռանսացիներ չեն . Վիրլէ-Կրիֆֆէն՝ ամերիկացի է . Կիւսթավ Դան՝ հրէական ծագում ունի : Հապա այն չարա՞նը պելճիքացի բանաստեղծներուն՝ որոնք հիմն ի վեր նորոգած են ֆռանսական քնարը, և են՝ Վէռահառն, Մէթէռլինք, Ռընէ Կիլ, Վան Լէոպէռկ, Ռոտէնպաք, Մոքէլ, Էն . Էն ., և որոնք անմոռանալի հետքեր թողած են արդի բանաստեղծութեան մէջ :

Այս պարագան անգամ մըն ալ կուգայ հաստատել սա ճշմարտութիւնը թէ՛ չինական պատուի մը հարկ չէ պաշտպանել պարտէզին մոռտքերը։ Գրականութիւնները, ինչպէս կենդանական գործարանաւորութիւնները, մեծապէս կը շահին նորամոյժ չիճուկին ներարկումին։ Արտեստական ընարութեան այս եղանակը՝ հետաքրքրաշարժ ու նորօրինակ արդիւնքներ կուտայ։ Ֆւանսական արդի միաքը՝ իր հիմնական հանգամանքներուն մէջ նոյնքան աւանդական է, որքան իր նոր ու պատահական ձեւակերպութիւններուն մէջ՝ կեղեւապատրոյս պատուաստներու արդիւնաւորում մը։

Արդ, Ժան Մուէաս, իր հօրենական բուն անունով՝ Բարատիւաման տորուլոս, 1856 Ապրիլ 15ին Աթէնքի մէջ ծնած, Ատտիկեան հարազատ ու մաքրարիւն չափ մըն է, այ Փոանսական հողի վրայ արմատ բռնած:

Տասնեւվեց տարեկան էր, երբ, Եւրոպայի մէջ կարեւոր մասը չըջնէ յետոյ, Բարիդ եկաւ, ուր վերջնականապէս պիտի հաստատուէր, պղտիկ բայց հայրենաբաղձութեամբ անհանգիստ բացակայութենէ մը յետոյ՝ լոյսի և արուեստի տիեզերական մայրաքաղաքէն ։

Ժան Մուէսս իր գրական սկզբնաւորութիւնը ըրած է 1882ին, աշխատակցելով՝ երիտասարդ գրողներու կողմէ օրը օրին հիմնուած ու մեռած փոքր հանդէսներու մեծագոյն մասին:

Իր Աթենական ծագումը՝ բուլանդակ գիտակցութեամբը լեցուն, Ժան Մուէա՝ գոռոզ, ինքնահաճ ու խիստ անկախ նկարագիր մը հանդիսացաւ։ Փռանտական գրական շարժումին մէջ մանեւոր, չէր կրնար հանդուրժել որ գինքը չփոխէին հետեւեակ կամ երկրորդական անուններ։

բու հետ: Դրուի միայն կրնար ըլլալ ինքը, ու թէև մասնակցեցաւ սեկսոյիս շարժումին, բայց մանաւանդ հանդիսացաւ իբր հիմնադիր Ռոման Դպրոցին (l'École Romane) որուն կեանքը այնքան միայն տուեց, որքան ժան Մուէսս պէտ տեսաւ: Ժան Մուէսս զանազան թուականներով հրատարակեց. բազմաթիւ գրական յայտարարութիւններ, որոնցմով իր նորամոյծի եռանդներուն գոհացում կուտար: Հին գրականութիւններով անած միտք, հին բանաստեղծներու սիրահար, (Ժան Մուէսս կը ճանչնայ բովանդակ Փռանսական հին գրականութիւնը) մէկ կողմէն ջանաց գործածութենէ ինկած բառերու վերականգնացում մը մտցնել, միւս կողմէն՝ ընդունիլ շարադրութեան աւելի կամ նուազ մութ, աւելի կամ նուազ դժուարահասկնալի եղանակ մը, զոր կը մտածէր դիմակալել օրուան քիչ մը շատ բացայայտ ու չափազանց պարզօրէն հասկնալի եղանակներուն: Symbolismeի եղանակներէն մէկը չէ՞ր արդէն աւելի թելադրել քան ուղղակի ըսել:

Այս բոլոր ուղուած իսկատպութեան ջանքերը ասպարդիւն չեղան: Անոնք Ժան Մուէսսին շինեցին արագ հռչակ մը, զոր դժուար պիտի ըլլար ձեռք բերել զուտ և հանգարտ արուեստասիրութեան մը անաղմուկ անշահախնդրութեամբ:

Այսուհանդերձ՝ Ժան Մուէսսի մէջ ճշմարիտ բանաստեղծի կերպաս մը կար, անկախօրէն իր աճպարարական հնարագիտութիւններէն, որոնց մէջ ալ թերեւս անկեղծ էր ինք իրեն հետ: Բայց երկասարդական անսովորութիւնները, յիմար եռանդը, կռուասէր ոգին՝ պէտք էր որ տարիքին շնորհներովը ամօքէին, որպէսզի երեւան գար ճշմարիտ բանաստեղծը, այնքան ուռն, այնքան նրբաճաշակ, այնքան արուեստասէր ու աւանդապաշտ, բայց նաև՝ այնքան արդի:

Իր առաջին գրքերէն իսկ, ուր քիչ մը իր շինծու չինարէնը կը սահեցնէր, պաշտօնական քննադատութեան ուշադրութիւնը գրաւած էր արդէն: Կը հեգնէին զինքը, այս գոռոզ և բարձրայօն Աթենացին, որ Փռանսերէնը վերանորոգելու խիղախումը աններելի չէր գտներ ինք իրեն, որ բոլորովին առանձին կը գտնէր ինքզինքը, հինցած գեղեցկագիտութիւն մը՝ աւանդութեան ակունքին մկրտութեամբ վերանորոգելու պէտքին առջև: Այո՛, Փռանսացիներ ժպտեցան իր ոտնձգութիւններուն հանդէպ՝ զոր սակայն ամէն պարագայի մէջ բարեացակամ կը գտնէին: Բայց նաև չկրցան ուրանալ թէ՛ բանաստեղծի մը, ճշմարիտ և զուտ քնարերգուի մը չեղար կար՝ Սրչիպեղագոսի արեւոտ ու դիցաւէտ ակունքներէն տարադրուած այս Հելլէնին օտարոտի ալ անկեղծօրէն Փռանսասէր ձայնին մէջ:

Սկզբնաւորութեան ու պայքարի թուականները յատկանշող իր գործունէութեան մէջ՝ Ժան Մուէսս միջակօրէն միայն կը շահագրգռէ

Հայ ընթերցողը : Զինքը իբր ճշմարիտ ու մեծ բանաստեղծ ճանչնալու համար, պէտք է որ հասնինք Stanceին : Այս գիրքը, որ իր գլուխգործոցն է, վճռական հանդրուսնն է նաև իր տաղանդին նորասէր և զգուշարամոլ դեգերումներուն :

Այլ մարած են բոլոր յիմար և անխորհուրդ խանդերը : Ամօք հասունութիւնն է որ կուգայ, և ամէն դեգերում՝ վերջնական ուղղութեան մը մէջ՝ կը շտկուի դէպի միակ ու յաւիտեանական ակունքը դասական կիրթ ճաշակին, ուր ամէն բան կշռուած, չափուած, չափաւորուած է, խոհեմութեամբ, գիտութեամբ և արուեստով :

Բանաստեղծը մէկ կողմ կը ձգէ նոյնիսկ ազատ ոտանաւորը, զոր կը նկատէ անյարմար գործիք՝ իր մշակուած, անհունօրէն յօդուած անհատականութեան ժուժկալ ու գերանուրբ թրթուումներուն : Դասական տաղաչափութիւնը միշտ շատ աւելի «ազնուականութիւն, ապահովութիւն ունի, թոյլատու ըլլալով հանդերձ անհունապէս զանազանեղութեամբն ու զգացման կշռութիւնը, բայց հարկ է ճարտար գործաւոր ըլլալ» :

Ահա՛ այսպէս, խորհրդապահ, վերապահօտ, վարանօտ, զղջահա՛ր ինկ, իր երբեմնի սրտաղեղումներուն անխոհեմութեանը համար, բանաստեղծը խորապէս մարգկային շեշտ մը լսելի կ'ընէ Ապոլոնեան հինաւորաց քնարին վրայ :

Au temps de ma jeunesse, harmonieuse lyre,
Comme l'eau sous les fleurs, ainsi chantait ta voix,
Et maintenant, hélas! c'est un sombre délire:
Tes cordes, en vibrant, ensanglantent mes doigts.

Le calme ruisseau, traversé de lumière,
Reflète les oiseaux et le ciel de l'été
O lyre, mais de l'eau qui va creusant la pierre
Au fond d'un antre noir, plus forte est la beauté.

Իմ երիտասարդութեան օրերուն, ո՛ր դաշնակաշուր ֆնար,
Ինչպէս ջուրը ծաղիկներուն սակ՝ այնպէ՛ս կ'երգէր քու ձայնդ.
Եւ հիմա, աւա՛ղ, մրիկ տառապանք մըն է ան.
Քու յարերդ՝ միևէ կը քրքռան՝ կ'արիւնքնէ մտքներս:

Խաղաղիկ վսակը լուսամասնակ,
Կը ցոլացնէ քոյուններն ու ամառաւան երկինքը,
Ո՛ր ֆնար, բայց աւելի հզօր է գեղեցկութիւնն այն ջուրին
Որ սեւ փառանցաւի մը խորը՝ փարը պղծելով կ'երբայ:

Զգացումներուն խորութիւնն ու մոլեգնութիւնը այնքան իրական է հոս, որքան զանոնք մեղմելու, ամոքելու կամքը՝ բացայայտ և յաղթական :

Et quoi, peut-être aussi c'était mon naturel;
Je fus doux étant dur, et rieur, étant sombre.
Je voulus faire un dieu de tout ce temporel,
Et je traîne après moi des fantômes sans nombre.

Եւ յենչ, գուցե այդ իմ բնութիւնս եր.
 Քաղցրացայ՝ մինչ խիստ եի եւ կը խնդամ մինչ մթազնած եի.
 Ուզեցի աստուած մը շինել այս բոլոր անցաւորը,
 Եւ իմ ետեւես կը ֆաշեմ անհամար ուրուականներ:

Մուսան տխուր է, առանց լալկանութեան: Անիկա սրտաբեկ հան-
 դարտութիւնն ունի՝ կեանքին եղերական ունայնութենէն թափանցուած
 ու վիրաւոր աղնուական հոգիին. ուստի և՛ գրեթէ ինք իրեն է որ կը
 յանձնարարէ ժպտագին մեղամաղձութեամբ,

Ne dites pas; la vie et un joyeux festin;
 Ou c'est d'un esprit sot ou c'est d'une âme basse,
 Surtout ne dits point; elle est malheur sans fin;
 C'est d'un mauvais courage et qui trop tôt se casse,

Riez comme au printemps s'agitent les rameaux.
 Pleurez comme la bise ou le flot sur la grève,
 Goûtez tous les plaisirs et souffrez tous les maux,
 Et dites: c'est beaucoup et c'est l'ombre d'un rêve!

Մի ըսէք թէ կեանքը ուրախ խնոյժ մըն է.
 Այդպէս կ'ընեն սխմար մտերը կամ ստորին հոգիները:
 Մանաւանդ՝ մի ըսէք թէ՛ աւիկա անվերջ դժբաղդութիւն է.
 Այդ պիտի լինէր գեշ արիւնքիւն մը՝ որ խիստ կանուխեմ կը յոգնի:

Խնդացե՛ք՝ ինչպէս գարնան ձիւղերը կը ծփին.
 Արտասուեցե՛ք՝ ինչպէս փամիկ կամ ալեակը ծովափին վրայ.
 Ճաշակեցե՛ք բոլոր համոյթները եւ սառապեցե՛ք բոլոր ցաւերը.
 Եւ ըսէք, այս շատ է, եւ այս՝ երազի մը ստուերն է:

Stancesներու հատորը՝ երկու, երեք, չորս տուններէ բաղկացեալ ան-
 վերնագիր ստանաւորներու ամբողջութիւն մըն է, վեց զիրքերէ կազ-
 մուած: Բոլորովին ենթակայական բանաստեղծութիւն մըն է ասիկա, և՛
 ընդհատ՝ բայց հանդիսաւոր հծծիւնն է հոգիի մը, որ ինքնիրեն ունկնդ-
 րելով իր բարոյական մարտիրոսութիւնը կը քնարերգէ, յուշիկ, խորհր-
 դապահ՝ աղնուականութեամբ մը:

Ի՞նչպէս տառապած է այդ հոգին. ի՞նչ եղած են իր սուգերը: Դուք
 պէտք չունիք զանոնք գիտնալու: Վասն զի՝ ստիպողական իսկ չէ որ
 այդ հոգին մեծապէս ցնցող ու արտաքոյ կարգի ուժգնութեամբ աղէտ-
 ներ կրած ըլլայ: Էթիլ Կոտրֆուա, որ Vers et Proseի Յրդ հատորին
 (1906) մէջ Stancesները ուսումնասիրած է, խիստ լաւ կը բացատրէ այս
 պարագան: Տառապելու ձիրքն ունեցող զիւրաղգած հոգիին համար,
 երբեմն շատ իսկ են քանի մը յուսախաբութիւններ, դրոշմելու համար
 զինքը կեանքին եղերական պարապութեան ու ապրելու ոչնչութեան
 խորին ու անդարմանելի կսկիծովը: Այնուհետեւ՝ հոգին խորտակուած
 անօթն է, ամէն բան կը դպչի անոր, ամէն բան կ'արկւնտէ գայն, թէ և
 ինքը բնաւ չուզեր ձեռքէ ձգել հաւասարակշռուած, խաղաղ ու ինք-
 նագուսպ հանդարտութիւնով:

Triste jusqu'à la mort, en même temps joyeux,
 Tout m'est concours heureux et sinistre présage:
 Sans cause l'allegresse a pleuré dans mes yeux,
 Et le sombre destin sourit à mon visage.

Տխուր մինչեւ ցման, միեւնոյն ասեմ զուարթ,
 Ինն համար ամեն ինչ բարեբաղդ օժանդակութիւն մը
 Եւ դառնադէտ գուշակութիւն է.
 Առանց պատճառի՝ քերկրութիւնը շացած է ալիքունս մէջ,
 Եւ մօրին ճակատագիրը կը ժպտի երեսին:

Իւրաքանչիւր տուն՝ դո՛ւար մըն է, կատարեալ, բանուած, խղճմտօ-
 րէն յղուած: Ընթերցողը, անոնց ընթերցումին մէջ, անդիմադրելի
 հրապոյրէ մը ընդձգուած կը զգայ ինքզինքը: Անոնք տարօրինակ կեր-
 պով պարզ են, ու կը թուի թէ մենք իսկ պիտի կարենայինք գրել
 զանոնք, առանց դժուարութեան: Այդ իսկ է արդէն դասական ար-
 ուեստին յատկանիշներէն մէկը. կատարելութիւն ու մեծութիւն՝ պար-
 զութեան ուժով:

Ժան Մոռէաս աննշան ու սովորական բանաստեղծ մը չէ ահա: Չորս
 տող բաւական է կարդալ իրմէն, և ահա՝ ալ իր հոգիին հաղորդա-
 կանութիւնը համարկած է մեզ: Բանը (verbe) իր մօտ մազնիսական աղ-
 դումներով տողորուած է, և կարելի չէ անոր հետ հաղորդակցիլ, առանց
 վարակուելու, առանց ազդուելու: Ուրիշներ, շատախօսներ, բառամու-
 ներ, տարիներով ու հատորներով կ'առատաբանեն, — ու կը ձանձրա-
 ցնեն մեզ. ու կը գտնենք որ պարապ չաղակրատներ են: Ժան Մոռէաս
 քառեակով մը կը մոգէ ու կը գերէ մեզ:

Մէկ երկու տարի առաջ գրեց նաև Եւրիփիտէսի Իփիֆէնին. այ-
 սինքն՝ թարգմանաբար վերստին գրեց զայն, մէկ կողմէն պահելով
 հինաւուրց հարադատութիւնը ատտիկեան դուլիս-գործոցին ու միւս կող-
 մէն տալով անոր արդիականութեան ինքնատիպ դրոշմ մը: Խաղը, որ
 քանիցս ներկայացուած է արդէն ֆռանսական բեմերու վրայ, մեծ
 քննադատներու վիճալութեամբ կատարեալ ու անթերի դործ մըն է:
 Ժան Մոռէաս պատրաստելու վրայ է նաև ուրիշ թատերախաղեր, հին
 Յոյն թատերագիրներէն քաղուած:

Ամբողջացնելու համար Ժան Մոռէասի գրական դիմադժութիւնը,
 զոր տոկոսած եմ ժուժկալ գլծերով միայն պատկերացնելու, հարկ է
 աւելցնել թէ, Ժան Մոռէաս ալ բոլորովին հեռացած գրական
 դպրոցներէ, շարժումներէն, կոիւններէն, ինքզինքը ստուած է իր ար-
 ուեստագէտի խստամբեր սպրապումներուն:

Ժան Մոռէաս, բոլոր ազնիւ ու վեհ հոգիներուն նման, հոգ գտած
 է միթիթարութիւնը, և անհունօրէն քաղցր է զինքը լսել, երբ կ'ըսէ,

O toi qui sur mes jours de tristesse et d'épreuve
Seule reluis encor,
Comme un ciel étoilé qui, dans la nuit d'un fleuve
Brise ses flèches d'or,

Aimable Poésie, enveloppe mon âme
D'un subtil élément,
Que je devienne l'eau, la tempête et la flamme,
La feuille et la sarmant;

Que, sans m'inquiéter de ce qui trouble l'homme,
Je croisse verdoyant
Tel un chiène divin, et que je me consume
Comme le feu brillant !

Ո՛ղ դուն որ իմ սխռութեան ու փորձութեան օրերուս վրայ
Տակաւին կը փայլիս միայն,
Լուսաւորդ երկնիս մը նման որ գետի մը գիշերին մէջ
Կը խորհակե իր ոսկի սլաքները,

Ո՞րտակա՛ն Բանաստեղծութիւն, պարուրե՛ իմ հոգիս
Տարրով մը ներքին,
Թող ջուրն ըլլամ, քոյ մերիկն ու բոցն ըլլամ,
Տերեւն եւ ուռն ըլլամ.

Թող, առանց անհամարժէք ըլլալու մարդը խռովող բաներէն,
Անիմ դաշտագետ,
Աստուածային կաղնիի մը նման, եւ քոյ սպառիմ
Փայտուն կրակին նման:

ԱՐՏԱՇԷՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ

Իսկապէս ուսումնասիրութիւն մը չէ ներկայ գրուածքը, — այս տեսակ յաւակնութիւն մը իմ կողմէ կրնայ մնաս բերել գրչիս, — այլ ամենօրեայ տալանորութիւններէս քաղուած, ամփոփուած «պղտրիկ ուսումնասիրութիւն» մը լոկ, զոր գրի առեր էի արդէն և զոր, հրատարակութեան կուտամ, յուսալով որ Տիկին Զապէլ Եսայեանն ներողամիտ պիտի ըլլայ ինծի՝ իմ դատողութիւններուս արդար կերպին և դիտողութիւններուս անկեղծ չեղաին համար:

Է՛ն առաջ, Տիկին Զապէլ Եսայեանի մէջ իբր գրող, կարելի է տեսնել երկու հաճելի յատկութիւններ, որոնց չնորհիւ կրցած է քիչ ատենուան մէջ համբաւի մը տիրանալ: Վերջին աստիճան զգայնոտ, փափուկ հոգի մը կը կրէ, մշակուած միտք մը և տաք սիրտ մը պարփակող իր կնոջական ազնիւ մարմնին մէջ: Հիմա իսկ, յիշողութեանս կը ներկայանայ երբեմնի այն Զապէլ Յովհաննէսեանը, որ 1895ի «Ծա-

ղիկներուն մէջ իր գողտրիկ արծակ բանաստեղծութիւնները ստորագրեց, անոնցմով պարզելով տակաւին անկեղծ ու թարմ իր միտքին երազանքները, խանդավառութիւնները, երեւակայութիւնով և հեշտանքներով լեցուն: Այդ արծակ քերթուածները շատ աւելի մօտէն խօսած են պատանի սրտերու, տարաշխարհիկ բուրաստաններէ՝ հաւաքուած բերուած ծաղիկներու փունջի մը պէս գինովցնելով սիրատարաւ ու երազուն «աղջկան հոգիներ»ը:

Թող չկարծուի սակայն որ բոլոր այս խանդավառութիւնները իր հոգիին մէջ սպառած ըլլան կանուխէն, ընդհակառակը: Տիկ. Զապէլ Եսայեան զոր մեր զրականութիւնը ունի այսօր յանձին Օր. Զապէլ Յովհաննէսեանի, ամուսնութեամբը իրմէ ո՛չ նուազ արուեստագէտ ու գրասէր Տիգրան Եսայեանի հետ, աւելի տէրն է հիմա իր այդ զգացումներուն, զանոնք աւելի գիտակցօրէն կը պարզէ, կ'արտայայտէ, և այսօր, բոլոր իր գրուածքներուն մէջ հաւասարապէս ի յայտ կուգայ անոնց արժէքը, մեծութիւնը և ներդաշնակութիւնը: «Վէպը»ին, «Ապասման Սրահը»ին մէջ շատ գեղեցիկ էջեր կան, շատ գողտրիկ բացատրութիւններ կան Բնութեան պարզեւած այլազան տեսարաններուն վրայ, խորունկ զգացողութեամբ մը գրուած, և նկարուած՝ նոյնքան ճարտար վրձնով մը, որ ապահովապէս իր նկարիչ ամուսնին վրձինը չէ:

Ներշնչումը այս կնոջ քով որ տող մը ոտանաւոր գրել չէ փորձած թերեւս, չի պարփակուիր, չամփոփուիր մօքի ճիգով մը սեղմուած, ճնշուած բառերու ամուլ չըջանակի մը մէջ, այլ իբր տեսակ մը ներքին անբացատրելի ոյժ, կը մղէ զինքը Բնութեան ծոցին մէջ փնտռելու, որոնելու այն կարգ մը անթափանցելի խորշերը, աներէկոյթ նրբութիւնները՝ որոնցմով կարելի պիտի ըլլար ամբողջացնել գծուած պատկեր մը, զգացուած տպաւորութիւնները:

Երկրորդ յատկութիւնը Տիկին Զապէլ Եսայեանի — և այս յատկութիւնը աւելի կարեւորն է իր վիպագրի խմորին — իր գիտելու և դատելու յաջող կերպն է, որ գրեթէ միշտ կը յայտնորոշուի իր գրչին տակ այնքա՛ն ճշգրտօրէն սրքա՛ն համարձակօրէն: Յաճախ իսկ փորձուած եմ էրիկ մարդու մը գրչին վերագրելու իր գրուածքներուն մէջ տեղ տեղ արտայայտուած այն առողջ եղբակացութիւնները իր հոգեբանական վերլուծումին՝ զոր կ'ընէ այրական չունչով մը և շատ անգամ ճշմարիտ վիրաբոյժի մը խորութեամբ: Օր մը, «Վէպը»ին մէջ, զոր չստորագրեց կանխաւ, խմբագրական ՄԱԸ-ի մը անսալով, կը յիշեմ կարգացած ըլլալ տողեր՝ որոնք անգամ մըն ալ հաստատած են հեղինակը էրիկ մարդ մը նկատելու փորձութիւնս, այնքան այդ տողերը հեռի էին կնոջ գրչի մը արտայայտութիւնը ըլլալէ, իրենց յղացման և արտայայտման տեսակէտներով: Թերեւս նաեւ ամէն բան շատ մօտէն դիտած, խորունկէ ու

ուսումնասիրած, կեանքի դառնութիւնները աղէկ ճանչցած, զգացած ըլլալուն համար է որ Տիկին Զապէլ Եսայեան, ուրիշ գրուածքներու մէջ ալ, բայց մասնաւորապէս «Սպասման Սրահը»ին մէջ գրած է տեսակ մը անտարբերութեամբ անանկ նկարագրական տողեր՝ որոնք նուազ պիտի վայլէին իր կնոջական գրչին: Աւելորդ կը նկատեմ մանրամասնութեանց մէջ մտնել, որովհետեւ նպատակս խիստ և միակողմանի քննութիւնէ մը անցընել չէ իր գրական ամբողջ պաշարը, բայց որչափ որ կը յիշեմ վերագրեալ վէպին մէջ շատ intime վէրքեր, շատ գաղտնի ցաւեր կան տեսակ մը վեհանձնութեամբ ու չափազանց անկեղծութեամբ մէջտեղ դրուած, երբ անոնք պէտք էին մնալ հիւանդանոցին գոց պատերուն մէջ, ամէն հետաքրքիր և խուզարկու աչքերէ հեռու:

Ինչ որ ալ ըլլայ սակայն, իր կնոջական ճշմարիտ ու նուրբ զգացումները հանդէպ բնութեան գեղեցկութեան մէկ կողմէն, և միւս կողմէն իր դիտող ու վառվռուն միտքը ընկերական կեանքի գաղտնիքները մերկացնելու, բարոյական ցաւերը ամոքելու հետամուտ, պիտի բաւէին լիուրի իր գրական կարողութիւնը հաստատելու, զայն բեղմնաւորելու և զննելու անանկ սահմանի մը մէջ՝ ուր՝ քիչեր կը հասնին դժբաղդաբար: Արդարեւ, Տիկին Եսայեան, Պոլսահայ գրողներու վերջին սերունդին մէջ, մասնաւոր և ինքնավստահ տեղ մը կը գրաւէ այսօր, պատիւով և աշխատութեամբ վաստկուած, և ոչ ոք կարող է զլանալ իրեն այդ փառքը, որքան ալ պզտիկ ըլլայ անիկա, աւանդ, որովհետեւ ամէն բանէ առաջ, իբր գրող, այս մանկամարդ կինը իր գրականութեան մէջ ձգտում մը դրաւ, իր միտքի արտագրութիւնները չի նմանցուց այն տեսակ մը վիժած և գրական անունին չի վայլող պոռոտախօսութիւններուն՝ զորս ստորագրելու չեն վարանիր շատեր այսօր: Ամփոփենք պահ մը իր ցիրուցան յօդուածները և անոնց մէջ պիտի գտնենք իր կնոջ հոգին, իր դատելու հաճելի կերպը և հոգեբանական պզտիկ արցերու լուծումները երբեմն, զորս ինքը միայն, իբր կին, կրնայ զգալ և եղբակացնել: Այս կնոջ մէջ գրական sens մը կայ և կատարեալ entendement մը ունի գրականութեան հանդէպ, ինչպէս ուրիշներ ունին զայն՝ երաժշտութեան հանդէպ:

Մնաց որ, Տիկին Զապէլ Եսայեան, խոստովանինք, բոլոր այս բաները կը գրէ առանց ճարտար հոգեբան մը, ո՛չ ալ եղական վերլուծող մը ըլլալու: Կեանքի աներեւոյթ իրերուն մէջ գաղտնիք մը փնտռելու չափ առաջ չերթար և ոչ ալ ընկերական արտակարգ պարագաներ, բարքեր ուսումնասիրելու չափ յանդուգն է: Կնոջական վերապահութիւն մը թերեւս իր կողմէ, բայց իր վէպերուն մէջ դրած է, և յաջողապէս, այն անձերը միայն, որոնք հոգեկան ներքին փոթորիկներու ծովախոտէն բռնուած են և ենթակայ եղած ճակատագրային այն վտանգալիր պատահարներուն՝ որոնց ականատես կ'ըլլանք յաճախ մեր առօր-

եայ կեանքին մէջ : Եւ այդ հոգիները որոնք «աղջկան հոգիներ» չեն ալ , մեղ կը յուզեն անկեղծապէս և սիրցնել կուտան ինքզինքնին : «Վէպը»ին մէջ Հրանդ և Սարգիս նոյն հոգեկան փոթորիկներուն ենթարկուած երկու պատանիներ են , որոնք կը տառապին տեսակ մը մեծամոլութեամբ և յաւակնութեամբ իրաւ , բայց վերջապէս կը տառապին : «Սպասման Սրահը»ին մէջ , տիկին Էվան և Սատարօֆը կան միեւնոյն զգացումներէ , վիշտերէ չարչարուող , իսկ դարձեալ «Շնորհքով Մարդիկ»ին^[1] մէջ Աննիկ և Յակոբ , երկու միակ դէմքերն են ճշմարտապէս տառապող և ճակատագրի հարուածներէն հալածուող : Եւ բոլոր այս «թիր»երը կը յուսահատեցնեն մեղ՝ իրենց անկարողութեամբ , իրենց հեգնութեամբ , բայց միանգուցաւ կը գրաւեն մեր արգահատանքը , մեր համակրութիւնը , որովհետեւ ամէն բանէ առաջ , անկեղծ են իրենց տուայտանքներուն մէջ : Չար , գուհիկ «թիր»եր չեն , ազնիւ են ընդհակառակը , զգայուն են , գորով ունին , սիրտ ունին իրարու համար : Արցունքոտ աչքերով , դողդոջ շրթունքներով միայն կը յայտնեն իրենց ներքին ցաւերը , ազնուական ոգւով մը և կարող չեն բերնով , ազատօրէն , համարձակօրէն բացատրելու , պոռալու զանոնք մարդոց երեսին : Եւ ասիկա տխուր է , տխուր է նաեւ հեղինակին գրիչը՝ որ այս էջերը կը հիւսէ : Այս էջերուն մէջ սանկ յոռետեսութեան թեթեւ չունչ մըն ալ կայ , եթէ չեմ սխալիր , որ ընթերցողին թէ՛ հաճելի , թէ՛ անախորժ կրնայ թուիլ : Կազմուածքի , խառնուածքի խնդիր է թէեւ , բայց ամէն ընթերցող չի ճանչնար իր մէջ , տխրելու , յուզուելու քաղցրութիւնը՝ լաւատես միտքի մը և հանգաւոր սիրտի մը տէր ըլլալով հանդերձ :

Եւ այս տխրութիւնը որ գոյութիւն ունեցած է յաճախ Տիկին Զապէլ Նսայեանի գրութեանց մէջ՝ իր հետքը թողած է նաեւ անոր մանկամարդ և՛ սիրուն կնոջ դէմքին վրայ : Ֆրանսայէն վերադառնալուն , երբ առաջին անգամ ճանչցայ զինքը , Տիկին Զապէլ Նսայեան երեւցաւ ինծի մէկը այն հանգարտ , երազադէմ ու խոհուն կիներէն՝ որոնք իրենց զիւմագծերուն մէջ պահել , անոնց անշուշտիւ ծալքերուն մէջ պահպանել կը փորձեն ներքին խռովքի մը և գործող միտքի մը արտայայտութիւնը , charme-ը : Վերջապէս իր քալուածքին , իր շարժուձեւերուն , իր խօսուածքին մէջ , Տիկին Նսայեան չունի այն pédantisme-ը , զոր այնքան ճանճրոյթով կը դիտում ուրիշներու վրայ : Շատ անգամ , այս վերջին տարիներս , «Ծագիկ»ի խմբագրատան մէջ , Գուրչունչու խան , Դաւաթիա , ուր կուգար իրրեւ բարեկամ և աշխատակից , իրարու հանդիպած ենք և հոն , գրեթէ միշտ , տպաւորութիւնը կրած եմ իր համա-

[1] Նժան-Պապիկեան Գրասուենն մօտ օրէն հրատարակելի հասարակ մը՝ որով կ'անգագանի «Տօմիցո»ի այս տռագրանքը : — Խմբ. Նժան.

չափ, ծանր և աղնուական դարձուածքներով խօսուածքին ու գրական նութեան ու գեղարուեստի համար իր ունեցած սէրին, հաւատքին: Թերեւս այս հանգամանքներուն մէջն է որ Զիֆթէ-Սարաֆ ուղեց նշմարած ըլլալ Տիկին Զապէլ Յսայեանի գրական frame-ը և ողբաց անոր հեռացումը մեր խմբագրական հորիզոնէն: Ինչո՞ւ չէ: Միքայէլ Շամտանճեան, որ հակառակ իր մեծամիտ տաղանդին և անօգուտ սկզբունքներուն չէր կրնար վարել այս զուտ գրական շարաթաթերթը և օրէ օր կը ստանար անոր վարկաբեկութեան ապացոյցները, չլրցաւ արժանաւորապէս գոհացնել այս կին-գրագէտին բերած մտաւորական և բարոյական գեղեցիկ աշակցութիւնը: Տիկին Զապէլ Յսայեան շատ կարճ ատենուան մէջ և շատ մօտէն աշխատեալ եղաւ դժբաղդաբար գրական և խմբագրական շրջանակներու մէջ տեղի ունեցած կարգ մը ստորագրաւորութեանց և ճղճիմութեանց տեսարաններու: Եւ զարմանալին այն է որ այս կնոջ քով ճարտար խմբագրի մը խմորը կար, էրիկ մարդէ մը աւելի չարքաշօրէն և վեհանձնօրէն կը փարէր գրասեղանին, միտքին մէջ ուրուագծուած յօդուածը իսկոյն թուղթին յանձնելու և թերթին հրատարակութիւնը փութացնելու ազնիւ մտածումով: Այսպէս «Ծաղիկ»ի մէջ, գրեթէ ամէն շաբթու, գեղեցիկ էջեր ստորագրած է Տիկին Զապէլ Յսայեան, օր օրի աւելի մտերմութիւն և անկեղծութիւն դնելով թերթին նկատմամբ ունեցած համակրութեան մէջ: «Վէպը» և «Սպասման Սրահը» վիպակները, այս վերջին գործը Փրանսերէն գրուած նախ, «Ծաղիկ»ի էջերուն վերապահուած և յանձնուած են, երբ խմբագրապետը մոռնալով դարձեալ իր թելադրող յօդուածները, կը խորհէր միայն թերթին տերեւները չթաւամեցնելու:

Բայց կը տեսնեմ որ փորձուեցայ գրական յիշատակներուս ծրարը պրպտել, երբ իմ պարտքս է միայն հոս խօսիլ «Շնորհքով Մարդիկ»ին համակրելի հեղինակին վրայ: Է՛հ ուրեմն, Տիկին Զապէլ Յսայեան, չեմ վարանիր ըսելու, կոչուած է՝ շնորհիւ իր տաղանդին և շնորհիւ մանաւանդ իր անվեհեր աշխատութեան, որ կարեւոր խայծն է մտքի կարողութեան, արտադրել տակաւին գրական ընտիր և երկարաշունչ գործեր: Այս կնոջ վերագրեցին Փրանսական գրականութենէն ազդուած և առաջնորդուած ըլլալու յանցանքը, իբր թէ թերութիւն մը ըլլար ագ և կամ թէ արդի գրողներէն ոմանք և հիներէն ալ թերեւս՝ տարբեր կերպով ըրած ըլլային: Իր կարգ մը գրուածքներուն մէջ կան արդարեւ օտար միջավայրի և օտար կեանքերու տպաւորութիւններ, բայց այդ տպաւորութիւնները հզօր մէկ ապացոյցը պարտին նկատուիլ դարձեալ հեղինակին դիտելու և ուսումնասիրելու կարողութեան: Եթէ Տիկին Զապէլ Յսայեան, օրինակի համար, մեր Հիւանդանոցին ներքին կեանքն ալ ճանչցած և պատկերացուցած ըլլար այնքան ճարտարօրէն և գեղեցկօրէն որքան ըրած է «Սպասման Սրահը»ին մէջ, ապահովաբար մեր

գրականութիւնը օժտած պիտի ըլլար շահեկան ու միշտ այժմէութիւն ունեցող գիրքով մը :

Եւ յետոյ չմոռնանք ըսել որ, Պոլիս վերադառնալէն ի վեր, Տիկին Զապէլ Եսայեան առիթ ունեցաւ աւելի մօտէն ուսումնասիրելու, բաղ- գատելու և դիտելու Հայ միջնաւայրը, և այս ուսումնասիրութենէն ծնան «Իւսկիւտարի Վերջալոյսներ»ը, ինչպէս նաեւ «Կեղծ Հանճարներ»ը, որոնք մէկէ աւելի յաջող ու սիրուն պատկերացումներ ունին իրենց մէջ, նկարագրական նոյն ճարտար ու խորունկ զգացողութեամբ գրուած : Այդ ուսումնասիրութենէն ծնունդ առած ըլլալ կը թուի նոյնպէս «Ծնորհքով Մարդիկ» վէպը, որ թէեւ կարճ ու զանազան կէ- տերու մէջ թերի, լաւագոյնն է մինչեւ հիմա արտադրուածներուն, տոհ- մային ու տեղական բարքերու վրայ իր պարզած հայեացքներով ու ներկայացուցած շահեկան դէմքերով :

ՏՕՄԻՆՈ

ԽԱՉԱՏՈՒՐ ՄԻՍԱՔԵԱՆԻ ՄԷԿ ՆԱՄԱԿԸ ՏՕՔԲ. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆԻՆ

Այս Սիրիլլայները՝ գորովասիրտ մայր մը և խանդակաթ հայր մը ըլլալով, հարկաւ, իրենց սիրուն մանկանը վրայ ըրած գուշակութիւնն- ներնին՝ որ աւելի սրտեղնուն իղձն ու յափաքը ըսել կ'ըլլայ, հարկաւ, տխուր և դառն գուշակութիւնն չէր ըլլար : Բայց, ես ալ, որ այն վայր- կեանին դեռ քեզի օտար էի, ես ալ անոնց խրախուսանքը քու վրադ գուշակեցի քիչ մը աւելի յստակամտութեամբ, և տասնըմէկ տարի ետե իմ գուշակութեանս յաղթանակը հրապարակաւ հռչակելով, տասնըեօթը տարի ետքն ալ, երեք Հայ վկայից բաղմութեան և չորս ալ քննիչ և մեծանուն վարդապետաց առջև, բժշկական ճառիդ մեկնարանութիւնն ու ջատագովութիւնն ընելուդ հանդիսատես եղայ, և վարդապետական անունն ու պատին առնելուդ ալ անձամբ վկայ գտնուեցայ, ա՛յն տա- րիքիդ մէջ, ուր ուրիշներն ընդվայրայածութեան և ինքնակամութեան հողմերէն երկար ատեն կոծելնուն և տատանելնուն ետե, հազիւ անորոշ և աննպատակ ուսման մը սկզբնաւորութիւն կ'ընեն : Ես հոն իրրե գու- շակ՝ իրրե դատարարակ և իրրե բարեկամ, վաստակոցդ աղնուական վախճանաւը վարձատրեցայ, Նախասահմանութիւնը ծննդեանդ հետ քեզի երեք հատ մեծ պարգեւ ըրած էր, մօտցի և աղնուախոհ ծնողք, բարեկեցութիւն և արդասաւոր հանճար : Այս երեք նախասահմա- նութիւնները քու հանդերձեալ յառաջադիմութեանդ օժանդակու- թիւններն էին : Միայն, քու աշխատութեանդ խթան մը, և մտաւորա- կան կարեացդ ճարակ մատուցանող դեղ մը պէտք էր : Երկինք քեզ մատաղ հասակիդ մէջ մանկութեանդ բարեկամ գուշակին ձեռօքը՝

Փարիզ իմաստից ուղիկանոսին հոսանայը մէջ ծնողացդ ծոցէն վերցուց նետեց, ուր տասը տարի ծփալէդ ետեւ, յաջողութեամբ՝ նկատած ափունքդ ելար, երիտասարդութեանդ առաջին տարիներուն մէջ մօտք ծերացեալ: Մարդուս կարճ կենացը մէջ ասկէ աւելի ի՞նչ մեծ խնդութիւն և ի՞նչ մեծ սփոփանք կ'ըլլայ: Բայց այս խնդութիւնն ու սփոփանքը, ուշով նկատուելով, դեռ յուսոյ աստիճանին մէջ է. անոր համար որ, վարդապետութիւնդ նորածին է և արդիւնքն ապառնի: Ներէ ուրեմն ինձի, վարդապետութեանդ վաւերագիրը դեռ չառած, անգամ մըն ալ սոյն վեց տարեկան մանկիկը աչքիս առջին բերելով, վերջին պարտք մը վճարելու զիտմամբ երկու բան յիշեցունեմ քեզի: Առաջին, դուն Աստուծոյ ողորմութեամբն՝ առուր հացդ քու ուսումնակցացդ շատերուն պէս միայն արուեստիդ ետեւէն ակնկալելու դատապարտեալ չես: Երկրորդ, բժշկականութիւնը իմաստասիրութեան քոյրն է, և մարդիկ կենաց ամէն վայրկեաններուն մէջ հիւանդ չեն ըլլար, բայց մտաց զօրութիւնն ու առողջութիւնը միշտ և անդադար դարմանի կարօտ է. համայնքդ կարօտէն աւելի բժիշկ ունի և իմաստասիրական կարօտութեանը մէջ չքաւոր է: Թէ որ անոր իմացական կարիքն անտես ընես, թէ որ անոր բժշկական ու առողջապահական օգտին համար ակամջդ խցես, այսինքն՝ սոյն երկու քերց մէկն իր կորովոյն և գեղեցկութեան վերնակէտը հասցունելէդ ետեւ միւսն անխնամ լքանես ու իր զօրութիւնն ու գեղեցկութիւնը չի մշակես նէ, ինքզինքդ ու սկզբունքներդ անձամբ ստած կ'ըլլաս: Մարդկային տկարութեան երկիւղին ու խիղճս թեթեւաբեռնելու փութով այս վերջին աղաբարբութիւնն ըրած տեղս, զգուշութիւնը՝ և ոչ թէ երկմտութիւնն է խօսքերուս թելադրողը. քու բնականիդ վրայ վստահութիւն ունիմ, և առաքինական ապագայիդ կ'ակնկալեմ: Այս ասպագայիդ նպաստին համար, միանգամայն ճառիդ ճակատն իմ անունս ալ դրոշմելու պատուասիրութեանդ շնորհակալութեանս նշանակի համար, սիրով կ'ընծայեմ քեզի Բելլանի տաանըններորդ դարու դաւանութիւնը, որ իմ ալ դաւանութիւնս է, և մարդկային ազգին յառաջդիմութեան ճշգրտագիր պատկերն՝ անհերքելի ապացոյցն ու վեհանձնական և պերճախօս խրախուսութիւնն է: Եւ այս ազնուական գրքին հետ յաջողութեամբ համար քեզի ուրախակցութիւն և շնորհաւորութիւն ընելով.

Մնամ սիրոյդ միշտ քառեացակամ

Խ. Պ. ՄԻՍՆԻՔԵԱՆ

Այս նամակը գրուած է կոկիկ ու մաքուր գրով, կանոնաւ թուղթի վրայ, վերոյիշեալ գրքին հետ կազմուած՝ ուր տեսալ մը յառաջաբանի տեղ կը բռնէ, վասն զի յառաջաբան չունի: Ինչպէս կը տեսնուի՝ նամակը մաքուր աշխարհաբարով գրուած է և Միսաքեանի վաւերագիր բաւը չա՛տ աւելի գեղեցիկ է քան վկայականը՝ զոր առ հասարակ կը դործածենք այսօր: Կը յուսամ թէ այս նամակը փոքրիկ ծառայութիւն մը կը մատուցանէ բանասիրական ուսումնասիրութեամբ շրջողներու, հոգ չէ թէ նամակին գրուելէն ի վեր 48 տարիներ անցած ըլլան:

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ԴԻՄԱԿԻՆ ՏԱԿ

Պարահանդէս :

Ամէն կողմ լոյս, բոյր և հրապոյր :

«Բըթի-Շան»ի թատրոնը, ճաշակաւոր յարդարանքի մը մէջ, հաճելի տեսարան մը կը պարզէ և հանդիսատեսին համար վայելք մըն է դիտել ընդարձակ սրահին հետզհետէ լեցուիլը ընկերային բարձր թէ՛ միջակ աստիճանի պատկանող աշխարհիկ կենցաղասէրներով և զիմակաւորներու ձոխ ու ինքնատիպ դրոշմով տարազներու զանազանութեամբ մը :

Օթեակներուն մէջ, արդէն կիսովին գրաւուած, չնորհալի ու նազանքոտ ընկողմանումներով՝ շուշան ճերմակութեամբ գեղեցկութիւններ կը տիրեն, կը տիրապետեն : Այրերու սեւ, վայելուչ հագուստներու սիլուէթներ կը գծգծուն հոս ու հոն, արագ երթեւեկներու ատեն մէկ օթեակէն միւսին առջեւ, և այսպէս յաջորդաբար : Եւ անա երկու չարածճի դիմակաւոր հոպիտներ, գունագեղ ու յատկանշական տարաշէնքով, որոնց գլխուն վրայ բոժոժաւոր գլխաւորներ կը բլրանան, սրահէն ներս աղմկալի մուտք մը կ'ընեն, ամէնուն հետաքրքրութիւնը հրաւիրելով իրենց ձկուն ու դիւրաթեք շարժումներով՝ մնչկատակներուն ու աճալարութիւններուն վրայ :

Ձոյգերը կը հասնին հետզհետէ, հիմա աւելի արագ ու յորդ ժամանումներով : Երեւ ծպտագեղատներ՝ որոնք հիացումով կը դիտուին : Հոս հոն՝ կնոջական զմայելի արդուզարդեր և մետաքս թափանցկոտութիւններու անխորհուրդ անվերապահութեան մէջ՝ հոլանի ուսերու և կուրծքերու ջինջ ու խրոխտ փայլատակումներ :

Ողեսորութեան ժամն է և իրարանցումը սկսած : Ծանօթ և անծանօթ դէմքեր որոնք իրար կ'արմկահարեն, որոնք իրարու կը խառնուին ու կը մոլորին՝ ընդարձակ սրահին մէջ ուր պտոյտները դժուարացած են... կարծես ենթրիկները դիւրացնելու համար :

Հսկայ, անսահման վէտվէտումն է ա'լ մարդկային ծիանուտ յորձանքին : Բազմաթիւ զոյգեր որոնք իրար կը խաչածեւեն, որոնք կը պտուտքին անել ճամբու մը մասնուածի շիտթութեամբ մը, մինչեւ որ կոր դիծերով կը՝ չեղին ու կը յառաջանան վերջապէս : Դիմակաւոր խարտեաչ ցնծուհի մը՝ որուն շուրջը պար բռնած են խումբ մը գեղապաշտ երիտասարդներ, կը զուարճացնէ զանոնք՝ առանց ճանչցուելու, և անա դիմակաւոր Հայ օրիորդ մը, ասդին, Տիրանին քովէն անցած ատեն կ'արմկահարէ զայն ու կը խուսափի իր պարընկերին հետ, չնորհալի բարեւ մը ուղղելով երիտասարդին, որ, հետաքրքրել, կը հետեւի անոր, առանց ո'վ ըլլալը հասկնալու :

Տիրան Բիւրեղեան, հիմա, առանձին, ուշադիր ու անձկոտ, միշտ

կը հետապնդէ : Զոյգերու առկանցումը կը շարունակէ իր առջեւէն , զուարթ , կայտառն ու ծիծաղկոտ : Երիտասարդը լարուած հետաքրքրութեամբ մը կը դիտէ անոնց շարժումներն ու կ'ունկնդրէ անոնց խօսքերուն , չարածճի , սրամիտ ու հեղնոտ : Հայուհին իր թեւին քսուելով կ'անցնի անգամ մըն ալ՝ խորհրդաւոր բառ մը թոցնելով ժպտագին :

— «Ո՛վ կրնայ ըլլալ արդեօք...» : Ու Տիրան զո՛ւր կը չարհրկէ իր միտքը , անծանօթուհիին անձը քողաղերծելու համար . բայց անօգնէտ : Միեւնոյն վրդովիչ խօսքերն ու շարժումները՝ Հայուհին կողմէ իր հասցէին և միեւնոյն անհնարութիւնը՝ զայն ճանչնալու՝ իր մտահոգութիւնը կ'աւելցնեն :

* * *

— Բարեւ , Տիրան :

— Բարեւ... :

Սեւ ՏՈՒՒՆՈ մըն է այս անգամ , — իրեն նման սեւազգեստ դիմաւոր կնոջ մը ընկերացած , — որ իր կարգին կ'ողջունէ Տիրանը , առկաւին իր անվերջ պրպտումներուն ու հաւանականութեանց հաշիւներուն մէջ մոլորած : Հայուհին առեղծուածը՝ իր գուցէ յոգնաւաստակ բնութեամբը՝ զինքը այնքան հրապուրելու երեւոյթը ունեցած ըլլալ չսխալ թուէր կարծես , որովհետեւ յանկարծ զսպանակէ մը մղուածի պէս , զինքը բարեւող ՏՈՒՒՆՈյն ետեւէն կը սկսի երթալ , գոնէ զա՛յն ճանչնալու համար : Բայց վաշխի նշանը արդէն տրուած է : Եւ ահա զոյգերը կը սկսին դառնալ , պտուտքիլ արագ ու ծիւսնուտ պարին յորձանուտքին մէջ : Երիտասարդը հազիւ ժամանակ գտած ընկերուհի մը ճարելու՝ կ'երթայ խառնուիլ ինքն ալ՝ տիրող անլուր ոգեւորութեան :

Ուշիմ ու հաստատակամ երիտասարդ մըն էր Տիրան Բիւրեղեան : Մէկը անոնցմէ՝ որոնք կեանքի անակնկալներուն մէջ պատահական ելեւէջներու ու փորձութեանց կանուխէն ծանօթացած , դիմադրաւոր ու սկեպտիկ խառնուածքի մը կը պարտին ապրելու որո՛շ ուղեգիծ մը : Հաճոյասէր ու կրքոտ , առանց կատարեալ պղազի մը ըլլալու , անծանօթին , նորին հրապոյրներուն խանդավառ երկրպագու , իր երեսնամեայ հասակին բովանդակ առնականութեան կը միացնէր համակրելի մոյք մը որ զինքը կը սիրցնէր իր յաճախած ընկերային միջավայրերուն մէջ : Գերման վաճառատան մը մէջ՝ հաշուակալի իր համեստ դիրքը պատճառեղած չէր որ ան զրկուած մնայ այն աշխարհիկ զբօսանքներէն ու հաճոյքներէն , որոնք օրուան երիտասարդութեան մտահոգիչ զբաղումն են դարձած , և փութացած էր այդ գիշեր օգտուիլ ներկայացած առիթէն , իր ճաշակին ու նախասիրութեանց համեմատ զուարճանալու համար :

Քիչ քիչ սկսած էր արդէն վայելել , զինքը չըջապատող ալեծուփ ու մշտաչարժ եռուղեւին մէջ , անակնկալ հանդիպումներուն հրապոյրը : Խորհրդածող ու յստակասէր միտք , յամառ վերլուծող մը անձերու և

իրերու, եւ նոյնքան անվնաս հետապնդող մը, Տիրան, միտքը դրած էր այդ գիշեր՝ երկու դիմակաւորներուն — որոնք անկասկած իրեն ծանօթ դէմքեր էին — խորհուրդը մեկնել: Նպատաւոր առիթը չուշացաւ: Դադարի մը պահուն, դէպի պիւֆէն դիմումի մը ատեն, մուտքին առջեւ գտաւ առանձին՝ Հայ օրիորդը իր պատահական պարընկերին սպասումին մէջ և առանց այլ և այլի:

— Զիս ո՞ւր ճանչցած էք, օրիորդ, հարցուց:

Անձանօթուհին, անայլայլ ու միշտ ժպտուն, համարձակօրէն, յարեց:

— Մօտա, երեկոյթի մը գիշեր....

Տիրան սկսաւ մտածել: Մօտա, երեկոյթի գտնուած ըլլալը չէր միշտ: Զգաց թէ խօսակցութիւն մոլորեցնել կ'ուզէր զինքը և թէ իր անունը զիպուածով սորված ըլլալով, կ'ուզէր զայն շահագործել: Գոնէ, իր սուր բնազդը — որսական բարակի հոտառութիւն — զինքը չէր խաբէր: Միւս կողմէ, տարակոյս մը, կասկած մը զինքը կը հաստատէին, կ'ամրացնէին քիչ մը առաջ իր ըրած հաւանականութեան հաշիւներուն մէջ: Իր կարգին, անվերապահօրէն, երիտասարդը հարցուց:

— Ո՞ւր կը բնակիք, օրիորդ... ևս ո՞ւր կը բնակիմ, կրնա՞ք ըսել:

Խուսափողական ու անճիշդ պատասխանը՝ ա'լ աւելի ապահովցուց Տիրանը իր կանխակալ համոզումներուն մէջ: Զարուհակեց: «Դասալիք աղջիկ մը, որ, ո՞վ գիտէ, ի՞նչ կերպով մոլորած ինկած էր հող՝ աննկատելի մը, որ, ո՞վ գիտէ, ի՞նչ կերպով մոլորած ինկած էր հող՝ աննկատելի հաճոյքներու զոհուելու համար դուցէ», խորհեցաւ: Այս մտածումը զինքը արտմեցուց: Ներս մտաւ պիւֆէն այն պահուն, ուր Հայուհին ընկերը եկած էր արդէն անոր միանալ:

[Յաջորդով]

ՄԻՇԻՐԱՆ ՌԻՂՈՒՐԵԱՆ

“ՄԱՍԻՍ”Ի ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Մասիսի հրատարակութեան հետ, զրական ուղղութեամբ հատորներով ալ Գիրքի աշխատութիւն մը մէջտեղ հանելու նպատակով, հաստատած ենք «Մասիսի Մատենադարան» անունով Շարք մը հրատարակութիւններու, ուր պիտի խմբուին գործերը մեր ծանօթ գրագէտներուն և բանաստեղծներուն, զրական, ոգեւորական և բանաստեղծական նիւթերու վրայ: Այս շարքին առաջինը **Ծիածան, ՄԻՍԱԿ ՄԵԾԱՐԵՆՑ** ի, հրապարակ կ'ելլէ մօտ օրէն, արդէն տպագրութիւնը աւարտած ըլլալով: Անոր պիտի յաջորդէ՝ նոյնպէս ծանօթ ու համբաւուած գրողէ մը՝ ուրիշ գործ մը՝ որուն տպագրութեանը պիտի սկսուի մօտ օրէն: Այս Շարքը իր յաջորդական հատորներով՝ պիտի կազմէ գեղեցիկ Մատենադարան մը՝ ընտրուած գործերով մեր օրուան գրողներուն, և փոստի ենք թէ՛ **Մասիսի** համակիրներ ու ընթերցողներ՝ հաճոյքով պիտի գիտեն հրատարակչական այս ձեռնարկը: **Մասիսի** հետ զուգընթացաբար, և պիտի փափաքին իրենց գրողարանին մէջ հաւաքել շարքը այս հրատարակութիւններուն:

Հիմնադիր. Կ. Ս. ԻԻԹԻԻԾԵԱՆ: Արժանատի. ՏՕ ԲԺ. Ե. ՄՍՍԻՍ: Տպագր. ՍԱԿԱՆՍՆ

խնդրագիր մը մատոյց Ս. Պատրիարքին և Ալգ. Վարչութեան, ժամ առաջ կարգադրութիւն մը ըլլալու համար կտակին գործադրութեան մասին հնչուն դրամին և պահանջքին գանձմանը աշխատուելով Պատրիարքարանի կողմէ: Պ. Թաննէսքուի Բարիդի Քրէտի Լիոնէին մէջ ունեցած կանխիկ դրամին գումարն է 158,000 ֆր. միայն. իսկ Օտեսայի և Քիշնէվի մէջ ունեցած պահանջքներուն ընդհանուր գումարը կը հասնի 500,000 բուլլի: Պարտատէրներէն ոմանք կ'աշխատին եղեր, զանազան միջոցներով, խոյս տալ իրենց սլարտքը վճարելու հարկին մէջ զտնուելէ: Այս պայմաններուն մէջ, հանդուցեալին ժառանգորդները կը խնդրեն որ Ալգ. Պատրիարքարանը տէր կանգնելով այս գումարներուն, —ինչ որ իր իրաւունքն է արդէն Պ. Թաննէսքուի կտակին զօրութեամբ,— գանձուելիք գումարէն մէկ երրորդը թողու ժառանգորդներուն և մնացեալը յատկացնէ կրթական և բարեգործական հաստատութեանց:—Բարիդի այս տարուան Սալոնին մէջ ցուցադրութիւններ ըրած են քանի մը Հայ արուեստագէտներ. Պ. Զաքար Զաքարեան ցուցադրած է չորս *Nature morte*, ծովանկարիչ Պ. Արսէն Շապանեան ցուցադրած է երկու ծովանկար, արձանագործ Պ. Սեպուհ Պէկեան՝ աղու մը կիսանդրին, և փորագրիչ Պ. Էտկար Շահինեան՝ երեք *Eau forte*: —Ալիքսանեան էֆ.ի Տնօրէնութեամբ կազմուած Օսմ. Տաւաթիք Թատերախումբը, իր առաջին ներկայացման դրած համակիր ընդունելութիւնէն ու յաջողութենէն խրախուսուած՝ ոչ նուազ փայլուն ներկայացում մը կազմակերպած է այս գիշերուան համար, Վառլէթէ Թատրոնը: Այս ներկայացումը պիտի տրուի ի պատիւ ծանօթ արուեստագիտուհի **ՏԻԼԻՆ ԶԱՊԷԼ ԷԼԵՆԻՄԵՆՆԻ**, որ Ալիքսանեան էֆ.ի խումբին յաջողագոյն անդամներէն մէկն է: Թատերախաղն է *ՄՕՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻԻՆԸ*, յուզիչ և հետաքրքրաշարժ տուամ 5 արարուածով, և ծիծաղաշարժ զաւեց մը: Եւրոպական օրերաներէ լաւագոյն կոտորներ պիտի երգէ Օր. Ք: Թատրոնին նուագախումբը պիտի նուագէ միջնարարներուն: —Տօքթ. Զօթօսի կինը, որ *amateur* դաշնակահար մըն է, կարգ մը «ֆանթէզի»ներ յօրինած ըլլալով, կը փափաքէր որ արուեստագէտ մը ձայնագրէր զանոնք իր նուագած պահուն: Այս նպատակով, քանի մը եւրոպացի դաշնակահարներ հրաւիրած էր, որոնք չէին յաջողած գոհացում տալ արուեստագէտ Տիկնոջ փափաքին: Յ. Սինանեան էֆ.ի վիճակուեր է կատարել այս դժուարին ձայնադրութիւնը՝ փափաքուած կատարելութեամբ: —Ս. Պատրիարքը կոնդակով մը կարգաւոյժ ըրած է Բաղէշի Տատիկ դաւառակի Ղուկիկ զիւղի Ղազար Տ. Ղազարեան և Պասգիւղի Յովհաննէս Տ. Յովհաննէսեան քահանաները, որոնք այրի մնալով յանդգնած են վերամուսնանալ: —Բարիզարնակ Տիկն Յակոբեան փաշա իր հաստատ մտադրութիւնը յայտնել է 12,500 ոսկիի նուիրատուութիւն մը ընկուլ՝ Իզմիրի մէջ աղջկանց վարժարանի մը հաստատութեան համար՝ իր աղջկան յիշատակին, համաձայն հանդուցեալ տնտեսին՝ Թագուր փաշա Յակոբեանի ըսողձանքին:

ՊԱԼՔԱՆ

ՍՈՒՆՁՆԱՇՆՈՐԶԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԲՆԿ

Դրամագլուխ և պահեստ ձրանք 9,500,000

վերապահովագրական

դրամագլուխ և պահեստ » 142,740,00

ՊԱԼՔԱՆ Ընկերութիւնը կ'ապահովագրէ հրդեհի դէմ ամէն տեսակ կահ կարասի եւն., Կ. Պոլսոյ և Թուրքիոյ զվաաւոր քաղաքներուն մէջ շատ դիւրամատչելի պայմաններով. իսկ իր միւս երկրորդ ճիւղը անմրցելի գիներով և պայմաններով օժտուած է. կը կատարէ իսառն ապահովագրութիւն, ընտանեկան, մանուկներու, եւն. եւն.:

Ընդհանուր գործակալ Թուրքիոյ ԱՐՇԱԿ ՈՒՆՃԵԱՆ

Գլաքիա, Տեօյքէ Օրիէնգ Պանքի կից, Սինասոն Խան.

(2)

Հանդուցեալ Կարապետ էֆ. Իւթիւճեանի թարգմանած հետեւեալ հետաքրքրական զրիքերը կը ծախուին բոլոր հայ գրավաճառներու քով. Կեդրոնատեղի Աշտնա գրատուն:

Ընտանեկան Գաղտնիքներ Յ հատոր	15 ղրշ.
Արուարձանին Տղան Յ հատոր	15 ղրշ.
Հանրակառքին Ոճիրը	5 ղրշ.
Ամուսնութիւնք Բարիզու	5 ղրշ.
Քաղաքական Տնտեսութիւն. Ժողէֆ Կառնիէ	5 ղրշ.

Գ. ԶՈՐԵԱՆ ԵՒ Ս. ԳՍԼՈՒՍՏԵԱՆ

Դառաւագիւնեւուն.— Եթէ կը փախաքիք որ տեսնուին Ձեր առեւտրական, կալուածական եւն. եւն. դործերը փորձառու և վստահելի գործակատարի մը միջոցու, առիթէն օգտուելով զիմեցէք վերոյիշեալ հասցէին «Կ. Պոլիս Էթմէքճի Կոօտ Խան» ուր կը կատարուին ամէն կարգի վաճառքներու ինչպէս նաեւ կալուածներու գնման կամ վաճառման յանձնարարութիւններ, ճշդապահութեամբ, փութկոտութեամբ: Յաճախորդներու հաշուէն միանգամայն կը գնուին (ներածութիւն) եւրոպական վաճառքներ, պատկանեալ նաւահանդիսաւ յանձնելի փոխարժէքով, ու կը վաճառուին (արտածութիւն) տեղական բերքեր՝ իր տեղը կամ աջուր յանձնելի պայմաններով: Խիստ դիւրամատչելի պայմաններ: Ընդարձակ տեղեկութեանց համար զիմեւ վերեւի հասցէին:


Ք Օ Պ Ր Ա

Կենցաղադիտութեան էական պահանջներէն մէկն է կօշիկները ներկուած պտտիլ միշտ, ոչ թէ փոշոցը ներկիկ տալով զանոնք, այլ տունէն դուրս ելած ատեն իսկ նախապէս անձամբ կամ սպասուհիին միջոցով ներկիկ տալով: Այս նպատակին համար ամբողջ աշխարհի մէջ լաւագոյնը հռչակուած ներկն է՝ ՔՕՊՐԱՆ, զոր կարելի է գտնել ամէն տեղ:

ՏՕՒԹ. Ե. ՄԱՍԻՍ

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զտու, մասնագիտութեամբ և երկար տարիներէ ի վեր կը դարմանէ ստամոքսի, աղիքներու, միզային ճամբաներու հիւանդութիւնները, ջղային տկարութիւնները, հին և նոր դաղիական ախտերը: Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման և նորսգոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ: Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զորեքշարթի օրերը միայն ձրի:

(8-10)



Զեռնի, ռոսի ու ռոսի եւ ձեռնի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց և տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԵՐ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

մեքենան լաւագոյնն է՝ այս մեքենան ամէնէն աւելի կատարելագործուածը, հաստատունը և դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը դնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Բնկերութեան վաճառատուններուն մէջ՝

ԿՊՇԱԲԹԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

- | | |
|---------|---|
| ԿԱՆԱԹԱՍ | 1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, 343 և 343. |
| ԲԵՐԱ | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ, |
| | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | 2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊԱՐԻՍ | 1. Սուլթան Համամ. |
| | 2. Սուլթան Պէյաղլա, Թրամվէյի կայարանին դէմ. 13. |
| ՍԵԻՏԱՆ | Զարչը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնները ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն:

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկերի Բնկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւղօղլուի տունը:

(9-10)

ՄԱՍԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլիսի և գաւառներու համար տարեկան

60 դր.

Արտասահմանի

» »

14 ֆրանք:

Թղթատարութեան ծախքը մեր վրայ:

Բաժանորդները իրաւունք ունին ստանալու մեր պարգևները,

միշտ ձրիաբար, Թղթատարութեան ծախքն ալ մեր վրայ:

Մասիսի բաժանորդագրութիւնը բացարձակապէս կանխիկ է:

Զերասարակուած ձեռագրերները ետ չեն դարձուիր:

Նամակ կամ որ և է գրութիւն ուղղել առ

ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Դուրեւունլու խան, քիւ 7, Կալաքա, Կ. ՊՈԼԻՍ

درعیه غلطه قورسونی خاندنہ نومرو ۷ «ماسیس» غزتمسی اداره فائمی

Rédaction de la Revue "MASSIS,"

Nº. 7, Courchounlou Han, Galata.
CONSTANTINOPLE

ԿԻՆԸ

ՀԵՂԻՆԱԿ ԵՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՄԱՍՍԻՍԻՆ ԿԱՐՑԻՔՆԵՐԸ

Այս անգամ պատմաւոյնքու ամփոփոյնով մը կը ներկայանայ Ենովք Արմէն: Այս գիրքով չէ՛ որ պիտի հաստատէր սա համարումքիւնք քէ իր գրադասի, բնականոյցի կարողութիւններուն կը միացնէ փայտի սաղանդը:

Ենովք բացի իր գրական արժէքէն, սպագրական տեսակետով ալ ուշագրու նորութիւններ կը պարունակէ: Ճաշակաւոր ու սիրուն հասար մըն է, որ փափաք կը ներշնչէ մէկ ծայրէն միւսը կարգալու:

Ենովք Արմէն (Ենովքի մէջ) կ'զգուցանայ այն միտ գրականութենէն, կ'զգուցանայ անարեւ մեծ տեսնակներու վարագործներուն Եսին դալկացող կեանքէն. իր ուզածը դուրսի կեանքէն է, կեանքի, գլխագրով, արեւին տակիցը, իր յարգ ալլազանութեան մէջ: Ու նաեւ, իր մօտ փառաբանող մը կայ մարդկային սկզբնական վաղնջական բնագոյններուն, զոր երկինք կը հանէ, գլխագրով մը: Ենովք Արմէն յատկապէս sensualiste, զգայական կամ զգայապաշտ է, առանց որ Են է անպարկեշտութեան:

Անուշտ ամէն գրասէր պիտի փափաքի ունենայ Ենովք Արմէնի այս հրատարակութիւնը, Ենովք, գրական գեղեցիկ վայելք մը բմբուխներու համար:

Ենովք, ներդնակին գրչի այդ առաջնեկ զաւակը, նորութիւն մըն է իր յղացումը:

Ենովք իր գրական արժանիքին կը միացնէ սպագրութիւն մը հիմնապէս առքիսիք ու բոլորովին նոր հաշակով, որ կը յատկանշէ Ենովքին համակերպի հեղինակը:

Երեսնամարդ հեղինակը, որուն գրաւոյնքը արժանաւ հանդիման կը կարդացուին օրաքերքերու եւ պարբերական հանդէսներու մէջ, այս անգամ իր մշտնջենքը խաւարացած է սիրուն ու կոկիկ հաստի մը մէջ, որուն սպագրութիւնը, բոլորին ազնուութիւնը եւ զեղեցիկ հաւակը հանդիման կը պարգեւէ ընթերցողին ունենալու անկէ հաս մը: Զերմապէս յանձնարարելի է այս գոյեցիկ հաստը:

Իր ընդհանուր հանգամանակով Ենովք կարգալուելու արժանի գիրք մըն է յաւաքոյն աշխատութիւններէն հեղինակին:

Դին 5 դրուշ, Կը գտնուի ամէն գրաւանատի ըով: